

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ,
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՀՐԱՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հարգարժա՛ն պարոն Մարգարեք

Հարգելի՛ գործընկերներ

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների՝ համապատասխանաբար դպրոցական, տարածքային և մարզային փուլերը մշտապես կարևորվել և կարևորվում են ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից:

ՀՀ Կոտայքի մարզպետը, մարզպետարանի աշխատակազմը շարունակաբար իրականացնում են անհրաժեշտ բոլոր գործողությունները օլիմպիական աշխատանքներն առավել կատարելագործելու, վերջինիս կազմակերպչական ողջություններին նորովի զարգացումներ հաղորդելու նկատառումներով:

Օլիմպիական գրագիտությունը, օլիմպիադաների նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացումը համարվում է մարզում իրականացվող կրթական քաղաքականության գերակա ուղղությունը, որը յուրաքանչյուր ուսումնական տարում ստանում է բոլորովին նոր ու սկզբունքային մոտեցումներ:

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերի համանման վերլուծությունը նպատակ ունի առավել համակողմանիորեն դիտարկել օլիմպիադաների նախապատրաստական, կազմակերպչական և իրականացման փուլերը: Հստակ գնահատել վերջիններիս ընթացքում գրանցված թերացումները, բացթողումները, դրական ու բացասական երևույթները, որոնց արդյունքում և մշակել գործընթացին զարգացում հաղորդելու նոր ու արդիական մոտեցումներ:

Հարկ եմ համարում նշել, որ առարկայական օլիմպիադաների վերաբերյալ պատրաստվել է համապատասխան վերլուծական նյութ, ուսումնասիրվել գործընթացի տարբեր ուղղությունները, որոնք հիմք են հաղիսանալու դպրոցներում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ օլիմպիական ակտիվությամբ ևս գնահատելու և համապատասխան վերաբերմունք ձևավորելու հարցում:

Առարկայական օլիմպիադաների հիշյալ վերլուծությունը հրապարկվելու է մարզպետարանի պաշտոնական կայքում, տրամադրվելու է նաև մարզի հանրակրթական դպրոցներին՝ տեղերում քննարկումներ կազմակերպելու և դպրոցական մակարդակում ևս այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների նկատմամբ դիրքորոշումներ մշակելու նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզպետի՝ 29.01.2013 թ. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման տարածքային և մարզային փուլերի առարկայական ստուգող հանձնաժողովների անվանական կազմերը և ժամանակացույցերը հաստատելու մասին» N 19-Ա որոշմամբ մարզում մեկնարկել է օլիմպիական գործընթացը, որի հիմքում դրվել է նաև Կոտայքի մարզպետ պարոն Շահգալոյանի չափազանց սկզբունքային մոտեցումներն այս հարցում և օլիմպիական աշխատանքները առավելագույն հետևողականությամբ կազմակերպելու՝ կարևորագույն հանձնարարականը:

Հիշյալ որոշման առաջին հավելվածով ձևավորվել է նաև աշխատանքների համակարգմանը միտված կազմկոմիտե՝ 20 անդամների ներգրավմամբ, ովքեր ներկայացրել են Կոտայքի մարզպետարանը և մարզի տարբեր հանրակրթական դպրոցներ:

2013 թվականի փետրվարի 4-ին, «Հայոց լեզու» առարկայով մեկնարկել է առարկակայան օլիմպիադաների տարածքային փուլը, որն ավարտվել է փետրվարի 21-ին «Նախնական գինվորական պատրաստվածություն» առարկայով՝ ընդհանուր առմամբ ընդգրկելով 15 առարկաներ:

Փետրվարի 23-ին Հրազդան քաղաքի N 4 հիմնական դպրոցում կայացած հանդիսավոր միջոցառմամբ մեկնարկել է դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլը, որը տևել է մինչև մարտի 14-ը:

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլը, վերջինիս ողջ կազմակերպական գործընթացը գտնվել է մարզպետարանի ուշադրության կենտրոնում:

Շնորհակալությամբ պետք է գնահատել առարկայական հանձնաժողովների կողմից կատարվող աշխատանքը, որը շատ դեպքերում տևել է մինչ գիշերվա ժամերը և հոգատար ու պատասխանատու հանձնաժողովականների աշխատանքի արդյունքում հասել իր տրամաբանական ավարտին:

Այս ամենով հանդերձ պետք է նշեմ, որ մարզի 30 դպրոցների 112 աշակերտներ, տարբեր առարկաների հանձնաժողովների կողմից երաշխավորվել են մասնակցելու առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին:

Օլիմպիական շարժումը մարզում անընդհատ կատարելագործվելու է և ստանալու է բոլորովին նոր ու արդիական որակներ և բարձր վարկանիշ:

Ամփոփելով խոսքս հարկ եմ համարում փաստել, որ բոլոր դիտարկումներով հանդերձ առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը կայացան, մեր մարզի աշակերտներն այս պահին մասնակցում են հանրապետական փուլին և նրանց հաջողությունները ևս կարժանանան մեր համապատասխան վերլուծությանը, գնահատանքին ու վերաբերմունքին:

Շնորհակալություն

15.06.2013թ.